



Հայաստանի կենսաբ. հանդես, Յավելված 1 (66), 2014

ԻՄՈՒՆԱՏՐՈՊ ՊԱՏՐՎԱՏՈՒԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՄՎՆ ԴԵՊՔՈՒՄ  
/L T-ՌԵՑԵՊՏՈՐՎՅԻՆ ԲԶԻԽՆԵՐԻ ԶԱՎԱԿԱԿԱՎ ՑՈՒՅԱՆԻԾՆԵՐԻ  
ՀԱՄԱՐԱՐՎԵՐԱԿԱԿԱՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ա.Ս. ԲԱԴԱՂՅԱՆ, Խ.Վ. ԲԱԴԱՂՅԱՆ, Ս.Գ. ՉԱՒԻՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Յ. ԲՈՆԻՄԱՐԺԱՆԻ անվան կենսաբիոլոգիայի ինստիտուտ  
asya.badalyan@mail.ru

Ուսումնասիրվել է /L T-ռեցեպտորային քիշների քանակական ցուցանիշների համարաբերակցական կապը իմունամոդուլատորների ազդեցությամբ: Ցույց է տրվել, որ իմունատրոպ պատրաստուկների ընդունումը ուղեկցվում է արյան /L T-ռեցեպտորային քիշների և ավային քիշների միջև, ինչպես նաև լիմֆոցիտների ու թիմոցիտների քանակական պարունակության միջև ֆունկցիոնալ կապերի առաջացումով:

**Գալարմին - լիմֆոցիտներ - ֆագոցիտային ակտիվություն**

Исследована корреляционная взаимосвязь показателей *ILT*-рецепторных клеток под воздействием препаратов, используемых в качестве иммуномодуляторов. Показано, что применение иммунотропных препаратов сопровождается образованием функциональных связей между степенью розеткообразующей активности *ILT*-рецепторных клеток крови и лимфатических узлов и количественным содержанием лимфоцитов и розеткообразующих тимоцитов.

**Галармин - лимфоциты - фагоцитарная активность**

Investigated the correlation relationship indicators *ILT*-receptor cells under the influence of preparations, used as the immunomodulators. It is shown that the use of immune preparations accompanied by the formation of functional connections between the degree of activity of *ILT*- receptor cells of blood and lymph nodes and quantitative content of lymphocytes and thymocytes.

**Galarmin - lymphocytes - phagocytic activity**

Օրգանիզմի իմուն պատասխանի հիմքում ընկած է 3 իմունական քիշների խմբերի համագործակցությունը: Դրանք T, B լիմֆոցիտներն ու մակրոֆազերն են, որոնց մասնակցության բաժինը իմուն պատասխանում կախված է լիմֆոցիայի տեսակից [1, 3]: Դրանց գործունեության սկզբունքը հիմնված է այս ռեցեպտորների գոյության վրա, որոնք կարող են կապվել բազի հետ կամ արտազատվել հակամարմինների տեսքով [2]: Գործնականում իմուն համակարգի վիճակի գնահատականը հիմնված է հակամարմինների և իմունակոմպետենտ քիշների քանակական բնութագրի վրա և հանդիսանում է օգտագործվող իմունակարգավորիչ պատրաստուկների անվտանգության և արդյունավետության հիմնական ստուգիչ:

Յայտնի է, որ իմունատրոպ պատրաստուկները լայնորեն օգտագործվում են երկրորդային իմունային անթափառարությունը կանխարգելման համար [4]:

Իմունածնության գործընթացով իմունակոմպետենտ քիչների ֆունկցիոնալ և ռեցեպտորային հատկությունների ուսումնասիրման նպատակով, որպես իմունամոդուլյատորներ, նատրիումի նուկլինատի, գալարմինի և սելենոպիրանի ազդեցությամբ որոշվել է IL T (իմունագլոբուլինաման մոլեկուլներ)-ռեցեպտորային քիչների քանակական ցուցանիշների համահարաբերակցական կապը [5, 6]:

#### Նյութ և մեթոդ:

Հետազոտության նյութ են հանդիսացել մկների առաջնային (թիմուս) և երկրորդային (ավշային հանգույցներ) ավշային օրգանները, արյունը և ներորուվայնային մակորֆագելը:

Փորձարարական աշխատանքների կատարման համար օգտագործվել են 20 հատ 18-20գ մարմին միջին զանգվածով ոչ գծային արոտ սպիտակ մկներ: Կենդանիները բաժանվել են չորս խմբի (յուրաքանչյուրում 5-ական կենդանի), որոնց ե/մ երանակով ներարկվել են համապատասխանաբար 0.2-ական մլ նատրիումի նուկլինատ, գալարմին, սելենոպիրան և ֆիզիոլոգիական լուծույթ: Իմունալոգիական ցուցանիշներին ուսումնասիրվել են արեալատուններ ներարկումից 24 ժ հետո:

Հետազոտության արդյունքները ենթարկվել են վիճակագրական վերլուծության: Վարիացիոն շաղթի բաշխման նորմալությունը ստուգվել է Կոլմարով-Սմիրնովի թեստով, որից հետո գոյաց առ գոյաց համեմատությունների ժամանակ օգտագործվել է Սույունելսով թեստը անկան ընտրակի համար: Արդյունքների համեմատական վերլուծությունը կատարվել է՝ օգտագործելով ANOVA տվյալների պարամետրիկ միագործուն վերլուծությունը: Արդյունքները համարվում են հավաստի առաջին տիպի փսակի հավանականությամբ ( $p<0.05$ ):

Վիճակագրական հաշվարկները կատարվել են SPSS 16 համակարգային ծրագրով:

#### Արդյունքներ և քննարկում:



Փորձի արդյունքներից պարզվել է, որ տարբեր իմունաստրոպների ներարկումից հետազոտվող իմունալոգիական ցուցանիշների միջև կապվածության աստիճանը տարբեր է (նկ. 1):

Ու չնայած այդ տարբերությանը՝ բոլոր խմբերում մշտապես պահպանվում է ավշային հանգույցների և արյան T քիչների ցուցանիշների ուղիղ կոռելյացիոն կապ: Հետևաբար այդ պատրաստուկների ֆոնի վրա ներքշային համագործակցությունները ընութագրելու և իմունալոգիական ցուցանիշների համահարաբերակցական կապը գնահատելու համար որոշվել է կոռելյացիոն գործոնը այդ ցուցանիշների միջև (աղ. 1):

Աղյուսակ 1. Իմունաստրոպների ազդեցությամբ իմունալոգիական ցուցանիշների համահարաբերակցական կապը

Կամահարաբերակցական կապ	Կոռելացիոն գործակից
Արյան T քիչներ-ավշային հանգույցների T-քիչներ	$r=0.93$
Թիմուսի T-քիչներ -լիմֆոցիտներ	$r=0.95$
Լիմֆոցիտ-նեյտրոֆիլ	$r=-0.96$
Նեյլոնցիտների բացարձակ արժեք-մոնոցիտներ	$r=-0.82$
Թիմուսի T քիչներ-նեյտրոֆիլներ	$r=-0.90$
Արյան T-քիչներ-մոնոցիտներ	$r=-0.94$

Բոլոր խմբերում մշտապես պահպանվել է ուղիղ կոռելյացիա արյան և ավշային հանգույցների T-լիմֆոցիտների ( $r=0.93$ ), թիմուսի T-քիչների և լիմֆոցիտների պարունակության միջև: Միաժամանակ նկատվել է ուժեղ հետադարձ կոռելյացիոն փոխկապակցածություն նեյտրոֆիլների և լիմֆոցիտների պարունակության, լեյկոցիտների բացարձակ թվի և մոնոցիտների միջև ( $r=-0.86$ ), թիմոցիտների մակարդակի ու նեյտրոֆիլների պարունակության միջև ( $r=-0.9$ ), մոնոցիտների պարունակության և պերիֆերիկ արյան T-քիչների մակարդակի միջև:



Ծանոթություն՝  $p < 0,05$ \* -սոուրգիչ նկատմամբ,  $n=5$

Նկ. 1. Խմուատրոպաների ազդեցությամբ բջջային խմուսիտետի որոշ ցուցանիշներ

Այսպիսով, կարելի է համարել, որ խմուատրոպա պատրաստուկների ընդունումը ուղեկցվում է թիմոցիտների ու լիմֆոցիտների քանակական պարունակության, ավշային հանգույցների ու արյան  $/L$ -ուցեապտորային քիշների ակտիվության աստիճանի միջև ֆուլկցիոնալ կապի առաջացմամբ:

- Դրական կորելացիա ավշային հանգույցների և պերիֆերիկ արյան բջիշների ակտիվության միջև( $> 0,7$ ):
- Դրական կորելացիա թիմոցիտների և լիմֆոցիտների հարաբերական պարունակության միջև:
- Բացասական կորելացիա թիմուսի Տ-քիշների և նեյտրոֆիլների քանակական ցուցանիշների միջև( $> -0,7$ ):

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Назаренко Г. И., Кишкун А. А. Клиническая оценка результатов лабораторных исследований// М. «Медицина», 546 с, 2006.
2. Тотолян А. А., Фрейдлин И. С. Клетки иммунной системы. С.-ПБ., Наука, 1,131, 2000.
3. Федоров Ю.Н. Верховский О.А., Жаданов А.И., Ездакова И.Ю. Кинетика синтеза различных типов антителосекретирующих клеток костного мозга мышей в процессе иммуногенеза // Доклады РАСХН, 5, С. 42-44, 2000.
4. Ярилин А. А. Контактные межклеточные взаимодействия при иммунном ответе. Мед. Иммунол., 1(1-2): 37-45,1999.
5. Galoyan A. A. Biochemical and molecular biological aspects of the brain immune system.-M.: «Nauka» publishers, -P.308. 2001.
6. Galoyan, A. Neurochemistry of brain neuroendocrine immune system: signal molecules / A. Galoyan // J. Neurochem. Res. - 9-10 (25). - P. 13431355. 2000.